ՀՍՏԱԿԵՑՎԵՑ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՀՐԱՎԻՐԵԼ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 22-րդ տարեդարձի տոնակատարության շրջանակում հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում ծրագրված տոնական միջոցառումների նախապատրաստական աշխատանքների հստակեցմանն էր միտված ընդլայնված կազմով օգոստոսի 27-ին քաղաքապետարանի նիստերի դահլիճում հրավիրված խորհրդակցությունը, որը վարում էր քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը:

Հանդիպմանը, որին համայնքապետարանի պատասխանատուներից բացի մասնակցում էին նաև քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներ, քննության առնվեցին առաջիկա տոների անցկացմանն առնչվող ամենատարբեր բնույթի հարցեր: Քաղաքապետ Ս.Գրիգորյանը ներկաների ուշադրությունը մասնավորապես հրավիրեց մայրաքաղաքի տոնական պատշաճ մակարդակի ձևավորման, փողոցների, հրապարակների և զբոսայգիների լուսավորման, բարեկարգման ու սանիտարական մաքրության ապահովման խնդիրների վրա: Նա ընդգծեց, թե հնարավոր ամեն ինչ պիտի արվի հիշարժան օրերին Ստեփանակերտն ավելի մաքուր, գեղեցիկ և հրապուրիչ դարձնելու, հանդիսություններին, մշակութային ու մարզական միջոցառումներին առավել մեծ թվով մարդկանց մասնակից անելու համար, որպեսզի տոնը դառնա յուրաքանչյուրինը: Իսկ որ տոնական հանդերձանքը քաղաքին համահունչ պիտի լինի և բարձր տրամադրություն հաղորդի բոլորին, դրանում կասկած լինել չի կարող: Չէ որ սեպտեմբերի 1-2-ին հենց Ստեփանակերտն է լինելու բոլոր հանդիսությունների գլխավոր կենտրոնատեղին…

Խորհրդակցությունում , բնականաբար, անդրադարձ եղավ նաև նոր ուսումնականի մեկնարկմանը, գիտելիքի օրվան /առաջին զանգին/ նվիրված միջոցառումների պատշաճ կազմակերպմանը: Այդ կապակցությամբ մի շարք կառույցների ղեկավարներ կոնկրետ հանձնարարություններ ստացան:

Խորհրդակցության աշխատանքներն ամփոփեց քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը:

Ստեփանակերտի քաղաքապետարանի

մամուլի քարտուղար